

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)
Հայաստանի Հանրապետություն
Կենսական Նշանակության Ծանապարհների Բարելավման Ծրագրի Լրացուցիչ
Ֆինանսավորման Ծրագիր
Ծրագիր-ID No.: P116760
Վարկ No. 7751-AM

1. Սույն Հայտերի Ներկայացման Հրավերը հաջորդում է սույն Ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների Ընդհանուր Ծանուցմանը, որը գտնվում է «Development Business» և «DgMarket» էլեկտրոնային էջերում 2009թ. հունիսի 9-ին:
2. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին (IBRD) ստացել է փոխառություն «Կենսական Նշանակության Ծանապարհների Բարելավման Ծրագրի Լրացուցիչ Ֆինանսավորման» ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **ստորև ներկայացված** ճանապարհային հատվածի անհրաժեշտ վճարումները կատարելու համար: Ծրագիրը իրականացվելու է Համաշխարհային բանկի և Հայաստանի Հանրապետության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը իրականացվելու է ՀԲ-ի կողմից սահմանված իրավասության կանոնների և ընթացակարգերի պահանջների պահպանմամբ:
3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հրավիրում է ներկայացնել փակ հայտեր իրավասու և որակավորման չափանիշներին համապատասխանող հայտատուների կողմից՝ **ստորև ներկայացված** ճանապարհային հատվածի վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար: Աշխատանքները ներառում են՝ ծածկի սառը վերամշակում և վերաօգտագործում* հին հիմքի քանդում և նորի կառուցում, փոսային նորոգում, հարթեցնող շերտի տեղադրում, ասֆալտ-բետոնե ծածկի կառուցում, դրենաժի իրականացում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման աշխատանքներ և այլն: Երևան քաղաքի աշխատանքները պետք է ավարտել մինչև 2010թ. դեկտեմբերի 15-ը:
4. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի կողմից ընդունված «Ուղեցույցներ: ՄՉՎԲ փոխառությունների և ՄՁԸ վարկերի շրջանակներում գնումներ»-ով (2004թ. մայիս ամսին ընդունված, հետագայում 2006թ. հոկտեմբեր ամսին լրամշակված խմբագրությամբ) սահմանված գործընթացների կազմակերպմամբ՝ Ազգային Մրցակցային Մրցույթի եղանակով: Մրցույթը բաց է Մրցութային փաստաթղթերով սահմանված իրավասու երկրների ծագում ունեցող բոլոր հայտատուների համար:
5. Ծահագրգիռ և իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկից (դիմել գնումների գլխավոր մասնագետ՝ պրն. Դ. Հայրապետյանին, հեռ: +374 10 580 523, էլ.փոստ: dchairapetyan@transportru.am) և ուսումնասիրել դրանք ստորև նշված հասցեյում՝ բոլոր աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 17:00:
6. Որակավորման չափանիշները ներառում են.

Պայմանագրի անվանումը	Հայտատուի պարտադիր պետք է ներկայացնի մասնակցության բանկային երաշխիք, որի գումարը պետք է կազմի /ՀՀ դրամ/	Պայմանագրի շնորհմանը հավակնող հայտատուի պետք է ունենա վերջին հինգ տարիների ընթացքում մնանառիկ բնույթի աշխատանքների կատարման փորձ՝ ճանապարհների շինարարության/վերականգնման առնվազն մեկ շինարարական պայմանագիր, որի արժեքն առնվազն պետք է կազմի /ՀՀ դրամ/	Պայմանագրի շնորհմանը հավակնող հայտատուի պետք է ունենա այլ պայմանագրային պարտավորություններից ազատ ընթացիկ միջոցներ կամ վարկային գծեր, որոնց արժեքն առնվազն պետք է կազմի /ՀՀ դրամ/
Պայմանագիր CW-NCB-AF-7/2010 Եղեգիս-Հերոն կմ0+000կմ3+500	8,500,000	412,000,000	206,000,000
Պայմանագիր CW-NCB-AF-18/2010 Եղեգիս-Հերոն կմ3+500-կմ7+540	10,000,000	480,000,000	240,000,000
CW-NCB-AF-15/2010 Մուսսելյան (Բասեն) – Ջրառատ կմ 13+000կմ16+770	12,000,000	615,000,000	246,000,000
CW-NCB-AF-16/2010 Ախուրյան-Կառնուտ կմ 4+000-կմ8+000	12,000,000	596,000,000	238,000,000
CW-NCB-AF-17/2010 Կառնուտ-Մուսսելյան (Բասեն) կմ8+000-կմ13+000	16,000,000	777,000,000	311,000,000

Պայմանագրի շնորհմանը հավակնող մասնակիցը պայմանագրի կատարման համար պետք է ունենա հետևյալ սարքավորումները՝ յուրաքանչյուր պայմանագրի համար.

- ասֆալտաբետոնային գործարան => 30տ/ժամ արտադրողականությամբ – 1 հատ
- Ռեսայրեր (ծածկի սառը վերամշակման և վերաօգտագործման մեքենա) աշխատանքային լայնությունը՝ նվազագույնը -2000մմ, մշակման խորությունը՝ նվազագույնը -400մմ*
- ավտոգրեյդեր – 1 հատ
- սարքավորում փոսային նորոգման համար – 1 հատ
- 9/12 տ պնևմոզդրոն – 1 հատ
- 10/13տ մետաղական գլոն – 1 հատ
- 6/8 տ մետաղական գլոն – 1 հատ
- 10/13տ թրթռագլոն – 1 հատ
- հիդրավլիկ կամ պնևմատիկ գոտրոնատոր – 1 հատ
- ասֆալտաբետոնադրիչ => 3մ կարգավորվող լայնությամբ և հարմար մեծածավալ աշխատանքների իրականացման համար– 1 հատ
- ավտոկշեռք (30 տ) – 1 հատ
- լաբորատորիա շին. հրապարակում կամ լաբորատոր սպասարկման հնարավորության առկայություն – 1 հատ

7. Հետաքրքրված հայտատուների կողմից մրցութային փաթեթը ամբողջապես հայերեն կամ անգլերեն լեզուներով կարելի է ձեռք բերել ստորև նշված հասցեով գրավոր դիմում ներկայացնելու և 50,000 ՀՀ դրամ կամ 150 ԱՄՆ դոլար գումարի չափով չհատուցվող գումար վճարելու պարագում: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին՝
Շահառու. «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհներ տնօրինություն» ՊՈԱԿ
ՀՀ դրամի համար. Հաշիվ # 1810052104953311
ԱՄՆ դոլարի համար. Հաշիվ 1810001104923311
Հայկական զարգացման բանկ, ՀՀ, Երևան
Մրցութային փաստաթղթերը կառավարվեն օդային փոստով Երևանից դուրս առաքելու համար և առաքիչի միջոցով Երևան քաղաքի տարածքում: Երևանից դուրս առաքելու պարագայում տեղափոխման համար կգանձվի լրացուցիչ 100, 000 ՀՀ դրամ:
8. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով մինչև կամ 2010թ. օգոստոսի 6-ը ժամը 15:00-ը (Երևանի ժամանակով): Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն անմիջապես նույն օրը 2010թ. օգոստոսի 6-ին ժամը 15:05-ին (Երևանի ժամանակով) մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ՝ ստորև նշված հասցեով:
9. Վերևում հիշատակվող հասցեն է. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ, սենյակ N 312ա
Պրն. Դավիթ Հայրապետյան, Գնումների գլխավոր մասնագետ
Հայաստան, Երևան, 0010, Նալբանդյան 28
Հեռ.՝ (+37410) 580523
Ֆաքս՝ (+37410) 580523
Էլ. փոստի հասցե՝ dhairapetyan@transportpiu.am

*Միայն CW-NCB-AF-7/2010 Եղեգիս-Հերմոն կմ0+000կմ3+500 և CW-NCB-AF-18/2010 Եղեգիս-Հերմոն կմ3+500-կմ7+540 Պայմանագրերի համար